ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ծաղկաբեր համայնքի ավագանու արտահերթ նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ծաղկաբեր	Ավագանու արտահերթ նիստ	14.07.2020թ.	10:00	**Ծաղկաբերի** համայնքապետարան (գ.Ծաղկաբեր,2 փողոց, 12 շենք)

Նախագիծ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թ.
Հուլիսի 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 14-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ծաղկաբեր համանյքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
   Զեկ. Հ. Հովհաննիսյան

2. Ծաղկաբեր համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին:
   Զեկ. Հ .Հովհաննիսյան

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
   Զեկ. Հ. Հովհաննիսյան

4. Ծաղկաբեր համայնքում բնակելի տան կառուցման նպատակով 4 բնակիչի անվճար շինթուլտվություն տրամադրելու մասին:

   Զեկ. Հ. Հովհաննիսյան

Նախագիծ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի ավագանու
2020 թվականի հուլիսի 09-ի թիվ 18 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բորջյան Էդգաի Սերգոյի----------30000 /երեսուն հազար դրամ/ սոց.օգնություն/
2. Քալամյան Վաղո Մելիքի----------30000 /երեսուն հազար դրամ/ սոց.օգնություն/

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 60000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

Նախագիծ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հիմք ընդունելով Լոռու մարզպետի 25.01.2019 թվականի թիվ 01/101.1/004414-2019 գրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 12-րդ կետով , 18-րդ հոդվածի 42-րդ կետով .

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին՝ բացառության կարգով <<Ֆուլեր տնաշինական կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Ծաղկաբեր համայնքի անավարտ բնակելի տների կառուցման նպատակով շինարարական աշխատանքներ կատարելու համար սույն բարեգործական կազմակերպության շահառուներ՝Մարուսյա Գասպարյանին, Գոհարիկ Ստեփանյանին, Արկադի Իսրայելյանին, Ռիմա Տոնոյանին տրամադրել շինարարական թույլտվություն առանց տեղական տուրքի գանձման:

Նախագիծ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ.ԲՅՈՒՋԵԻ
ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական Ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Ի գիտություն ընդունել Ծաղկաբեր համայնքի ղեկավարի համայնքի 2020թ. բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

Նախագիծ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի և <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի մասին>> ՀՀ Կառավարության 2000թ հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշումով:

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ծաղկաբեր համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2020թ. դրությամբ համաձայն ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվության 22 և 22-ա ձևերի: